

1895—96 դէպքերուն ազգեցութիւնը և դեռ չեն կըցած գտնել  
իրենք զիրենք, գոհացուցիչ վիճակ մը չունին.

\* \*

### ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ

Արժանապատիւ Հայր Խմբագիր,

Մինչև այժմ անկարող եղայ որևէ է բան գրել Փարիզից  
«Առմայ» հանդիսիդ համար, Այս անգամ Ֆրանսիա գալս, ու-  
սումնական-գրական ասպարիզի վրայ դեգերիլ շարունակելու  
նպատակով չէր դժբախտարար, որ յայտնի է թէ պատանեկան  
հասակիցս սկսած միշտ աչքիս առջևն եմ ունեցել առաւելապէս  
Փարիզում գտնուած ժամանակս: Այլ այս անգամ զալիս էի  
այս քաղաքակիրթ երկրի կողմը ապաքինուելու յուսով այն  
երկարատև տկարութիւնիցս, որ ասես որպէս վարձատրութիւն  
բազմամեայ ուսուցչիս շնորհեցին ինձ մեր դպրոցական փա-  
փուկ գործը իրանց քմահաճութեանը ենթարկող մեծապատիւ  
պարոնները, և...

Սակայն թողնենք այս ըստ երկութիւն մասնաւոր-անհա-  
տական կեանքիս վերաբերեալ տեղեկութիւնները, որ կարծեմ,  
հետաքրքիր չեն կարող լինել ամսագրիդ ընթերցողների հա-  
մար... Բայց միևնույն ժամանակ չը պէտք է մոռանանք, թէ  
մասնաւոր անհատների ամբողջ կեանքն ու գործունէութիւնն են,  
որ ստեղծում, գոյացնում են ամենքին հետաքրքրող և օգուտ  
տուող ընդհանուր հասարակական մեծ կեանքը: Մէկը առանց  
միւսի չը կայ և չէ կարող լինել: Թէ Ե՞րբ և մրտեղից, մարդ-  
կային կեանքի միջնորմից է արդեօք սկսում ընդհանուրը  
և դադարում մասնաւորը՝ որոշ, շօշափելի սահմաններ չը կան  
իսկապէս, բացի սահմանափակ թէ անձնական և թէ ընտանե-  
կան նեղ շրջանի մէջ կատարուող երկոյթներից: Երկոյթներ,  
որոնց մասին անգամ, երեակայեցէք, չեն զանց առնում երբեմն  
խօսել մարդուա կեանքը մեզանից անհամեմատ աւելի լաւ դի-  
տող երպական հմուտ քննադատները, որպէս զի աւելի լաւ  
կարողանան բացատրել և հասկացնել անհատի հասարակական  
կեանքի այլ և այլ միտումները, զանազան դարձուածքներն ու  
վարմունքը, ընթացքը, մի խօսքով ամբողջ կեանքը գրեթէ իւր  
բոլոր պարագաներով: Եթէ օրինակ, մեր դպրոցական գործի  
և գործիչների վերաբերմաբ մանրամասն խօսենք՝ մասնաւոր-

կեանք պէտք է համարենք: Ինչ էք կարծում, խեղճ Մակար Եկմալեանի գործունէութեան, դրութեան, ունեցած վիճակի, մեր գործիչների կողմից նորա կրած նեղութիւնների և մինչև իսկ հոգեկան հիւանդութիւնը հասցնող հալածանքների մասին որ խօսուի ու գրուի՝ մասնաւոր կեանք կը լինի՞ էն, մախլաւ, «զորն ասեմ»:

Սակայն թողնենք այս ամենը և գանք ներկայ գրութեանս, որ վաղուց ի վեր իմ սիրած Շնամակ Փարիզից գրաւիչ վերնադիրն է կրում:—

Եօթանասուն թուականների սկզբին Փարիզից առաջին անգամ—տարիներ շարունակ—նամակներ գրելով ինձ ապերախտ «Մշակին» երեմն էլ գանգատուում էի, թէ Թրանսիայի լուսաւոր մայրաքաղաքում ապրող մեր հայրենակից պարոնները և մանաւանդ հայ երիտասարդ ուսանողները շատ անտարբեր են միմեանց, սանութեամբ են վերաբերուում իրարու և ընկերական ոգուց զուրկ լինելով խուսափում են բարեկամական ծանօթութիւններ անգամ հաստատելուց իրանց մէջ:

Եւ այն՝ ինչ որ երեսուն տարի առաջ յանդիմանում, ասում էի լրագրական հրապարակի վրայ այստեղ ընակուող հայերի անընկերսէր յատկութեան՝ մասին՝ այսօր— քանակորդդ դարու սկզբին—ցաւ է ասել, զրեթէ նոյնը պիտի կրկնեմ փոքր ինչ փոփոխուած և այլ բովանդակութեամբ:

Բայց իրաւ, հայ մարդը Փարիզ ժամանելով և այստեղ ապրող ժիւր հայրենակիցների մասին կամենալով բան իմանալ՝ մւմը պիտի դիմէ, կամ այս անազին, աննման ու ընդարձակ նոր Բարելոնի հարիւրաւոր թաղերից մը կողմը պիտի վնայ, որ մօտ հազար հինգ հարիւր հոգուց բաղկացած տեղոյն հայ գաղութի—որի կիցն աւելին Տաճկաստանից են—կամ սորա որևէ անդամի գոյութեան նշոյլը տեսնէ, լաւ կամ վատ վիճակի մասին տեղեկանայ: Կայ արդեօք այստեղ հայկական մի հաստատութիւն, գոյութիւն ունի՞ արդեօք ներկայումս փարիզաքանակ հայոց մի ընկերութիւն, որ գոնէ լոկ եղբայրական սիրոյ, փոխարձ յարաբերութեան և օգնութեան մի վայր լինի, որպիսին տասնեակներով, եթէ չասեմ աւելին, ունին մայրաքաղաքիս մէջ քնակուող թէ Քրանսիացի և թէ օտարազգի մարդիկ: Կմն արդեօք այժմ այստեղ հայ ուսանողներ: Ունի՞ն արդեօք սորա իրանց ուսանողական շրջանը այլոց պէս: Ո՞ւ մը պէտք է հարցնել, մը կողմը դիմել, մւմից արդեօք պիտի իմանալ, լսել այս հարցերի պատասխանը, եթէ չենք ուզում, որպէս քանակորդ դարու առաջարկմ զաւակ (հապա, ի հարկէ) դիմել գաղութիս հայ հոգևոր հովուին:

Ո՞չ ոքին և ոչ մի կողմը, և կամ փողոցում, սրճարանում անակնկալ, յանկարծ պատահող հային (եթէ միայն բարեհաճէ իւր հայ լինելը յայտնել) և ամեն կողմը լայնածաւալ մայրաքաղաքիս, կը պատասխանեմ ես:

Հայ մարդկ Փարիզ գալով՝ անշուշտ հայ տեսնելու համար չէ գալիս, բայց հետեւելով այն ասացուածին թէ Շնմանը նմանին է սիրում՝ ուզում է վերահասու լինել այս հնաւանդ խօսքի ճշմարտութեան, իմանալ և տեսնել թէ արդեօք մըշափ ճիշտ է այս ասացուածը օտարութեան մէջ գոնուող իւր հայրենակիցների վերաբերմամբ։ Ասում եմ օտարութեան մէջ եղած իւր ազգակիցների վերաբերմամբ, որովհետև մայրենի երկրում բնակուող իւր եղբայրների մէջ եղած սիրոյ և միաբանութեան (հըմ) մասին—հայ մարդը շատ բան գիտէ և կատարեալ գաղափար ունէ...

Եւ ահա ուրիմն «նմանին է սիրում» ժողովրդական առածը հայերիս վերաբերմամբ ինչպէս միշտ և ամեն տեղ, նոյնպէս և Փարիզում նոյնն է եղել և դժբաղդաբար մինչև այսօր նոյնը մնացել՝ այսինքն յիշեալ ասացուածի հակառակը, որ ասել է թէ մեր մէջ նմանը նմանին ոչ թէ սիրում է, այլ քիչ է մնում որ ատէ, եթէ չէ ատում արդէն։

Տարիներով, գուցէ և բազմաթիւ տարիներով, այստեղ ապրող հայ մարդիկ կան, հայ ուսանողներ, ուսումնականներ, արուեստգէտներ, խմբագիրներ, բժիշկներ, արհեստաւորներ, հայ վաճառականներ, հասառուներ (rentiers), հայ ընտանիքներ, մի խօսքով արք և կանայք, ծերք և մղայք, որոնք իրարու հետ ոչ միայն ոչինչ ընդհանուր յարաբերութիւն չունին, այլ և աշխատում են խուսափել միմեանցից. որպէս զի ծանօթութիւն՝ չեմ ասում բարեկամութիւն, չը հաստատուի իրանց մէջ կրթութեան, մտաւոր լուսաւորութեան, ազատ և ամեն շահաւէտ բանով լայնարձակ, համաշխարհային քաղաք Փարիզի նման մեծ կենդրոնում ճշմարիտ առաջադիմութեան ուղիղ շաւով գնալու փոխանակ՝ մերոնք ասես յետադիմել են այստեղ, անկարող լինելով պատուաստել իրանց գաղութի անդաստանում այն օգտաւէտ բոյսերը, որ աւելի կարևոր և աւելի անհրաժեշտ դեղ ու դարման պիտի լինէին ընդհանրապէս ամենքի համար։

Եւ ի՞նչ ենք տեսնում. Մինչդեռ վաթսունական թուականներին, երբ համարեան նոր էր զարթել արդի հայութիւնը՝ նոյն ժամանակի փարիզաբնակ հայերը՝ հետևելով բնականաբար երկրի տէր ազգի՝ Փրանսիացւոց ընտիր ու օգտակար սո-

վորութիւններին, իրաւացի կարիք էին զգացել իրանք էլ իրանց ժամադրութեան վայրն ունենալ, ուր կարելի էր թէ իրարու հետ ծանօթանալ և թէ իրանց հեռաւոր հայրենիքի կարուն ու լուրն առնել միմեանցից. մինչդեռ, ասում եմ, նոյն վաթսունական թուականների ազգայնութեան ոգին, որ պատմական անհերթելի փաստերի աւանդութեամբ միութիւն և եղբայրութիւն ներշնչելով երողական բոլոր ազգերին՝ Փարիզում ապրող մեր փոքրաթիւ եղբայրներին ևս դրդել էր իրարու մտենալ, միանալ թէկուզ հէնց լոկ ծանօթ-բարեկամ լինելու համար, քսաներորդ դարու քաղաքացի մեր այժմեան «հէմշէրիները» զուրկ լինելով համանման զգացումից՝ աւելորդ են համարում այն ամենը, ինչ որ անմիջապէս անձնական և կամ իրանց սահմանափակ, նեղ «համքերարական», այն, աղանդական խմբակին օգնուտ չէ կարող տալ:

Օդէօն կոչուած Փրանսիական երկրորդ թատրոնի հրապարակի վրայ՝ Վօլտէր հոչակաւոր անուն կրող և այսօր էլ գոյութիւն ունեցող դիմացի սրճարանումն էր, որ փարիզարնակ մեր նախորդները վաթսունական թուականներին մի սենեակ — դանիլծ էին յարմարացրել իրանց ժամադրութեան ու տեսակցութեան համար և շանօթ արտնութեան անունը տուել: Այս հայկական առանձնասենակը, որի մասին հրապուրիչ Լուտէսիա ժամանող որևէ է կրթութիւն ստացած հայ լսել էր կանխաւ՝ հայերիս ժամադրութեան մի փոքրիկ վայր էր դարձել, ուր — ինչպէս ասում եմ, նորեկ այցելուն ևս բացի կենդանի խօսակցութիւնը լսելուց, կարող էր տեսնել և կարդալ նոյն ժամանակի հայ պարբերական հրատարակութիւններից գոնէ մի երկուաը, թէ մտաւոր և թէ այլ փոխանակութիւն ունենալ փարիզարնակ իւր հայրենակալիցների հետ, տեղեկանալ, ծանօթանալ սոցա ուսումնակը և կամ առհասարակ երողական առաջադէմ կեանքի նախանձելի կողմերին, սոցա դրութեանը, կացութեանը և այն:

Հա, չը մոռանամ յիշել այստեղ նոյն թուականների Փարիզի Մուրատեան վարժարանը իւր հարուստ շէնքով և այս «ազգային» հաստատութեան հիմնադիր Մուրատի կտակով թողած միիօնաւոր դրամագլխով, որ եօթանանականի սկզբին «կուլտուրական» դարձրին Մխիթարեան հայերը՝ լուծելով կամ բաղադրելով իրանց գործնական քիմիայի գիտութեամբ իրը թէ Ռաֆայէլեան վարժարանի մէջ այնպէս, ինչպէս որ իրանց ձեռնատու էր ի հարկէ... Այս գլորոցական հաստատութիւնը, որի մասին շատ անգամ և շատ տեղ գրուել, խօսուել է՝ որպէս

«ազգային» վարժարան, թէև չէր կարող մայրաքաղաքիս հայերի համար ժամադրութեան և կամ իւր գրադարանով ուսումնականի թեամբ պարապելու վայր լինել, բայց ինչ և է, Փարիզ ժամանող ամեն մի հայ մարդ սրտի մտօք և ուրախութեամբ այցելում էր ուսման այս տունը, որ իւր հիմնուելու օրից ծառայութիւն էր մատուցանում հայութեանը՝ համարակական մի քանի ընտիր գործիչներ ու գրագէաներ տալով ազգին: Եւ այս ի հարկէ այն ժամանակ, երբ Միհթարեանները կրօնական համբերողութեամբ փոքր ի շատէ զգացուած՝ եղայրական որևէ սէր է էին տածում դէպի ընդհանուր հայութիւնն առհասարակ և իրանց հաւատակից աշակերտների հետ հայ հարազաններին ևս ընդունում էին «ի թիւս ուսանողաց ազգային վարժարանի»...

Նոյն վաթսունական թուականներին էր, որ Կ. Պօլսեցի մեր հայրենակիցները իրանց քաղաքացի նշանաւոր Պօլոս-բէյի մահուան առթիւ առաջին անգամ մի հայ քահանայ ուղարկեցին Փարիզ, ուր և այնուհետև հայ հոգեոր հովուի պաշտօն հաստատուելու կարիք զգացուեցաւ. հոգեոր պաշտօնեայ, որ թէ տեղոյս փոքրաթիւ հայ գաղութիւ և թէ Եւրոպայում ցիր ու ցան եղած հայերի կրօնական պէտքերը պիտի լրացնէր:

Բայց և շատ հետաքրքիր և ընորոշ է թէ ինչպէս յիշեալ Պօլոս-բէյ Տատեանի մահը պատճառ է դառնում, որ մերայինը ևս ունենան Ֆրանսիայի մայրաքաղաքում իրանց քահանան և ապա՝ ժամանակի ընթացքի և պահանջման համաձայն, հայոց մի մատուռ էլ հիմնեն. մատուռ, որ հետզհետէ փոփոխութեան և կամ, աւելի ճիշտն ասած՝ մի տնից միւս տուն տեղափոխելուն ենթարկելով, այսօր արդէն մի հոյակապ նորաշէն և քարաշէն տաճարի \*) են փոխարկել շնորհիւ և «արդեամբք» մեր Թիֆլիսցի յայտնի բարեգործ Աղէքսանդր Մանթաշեանի: — Հա, Թիւրքիոյ «Բարութչի-բաշլ» Պօլոս-բէյը մերձ ի մահ լինելով՝ կամենում է խոստովանել և հաղորդութիւնն առնել ընականար հայ կրօնաւորի ձեռքով: Սակայն հայոց քահանայ չը լինելով Փարիզում՝ կաթոլիկ մի հայր են հրաւիրում, որ և կատարում է քրիստոնեայ հաւատացեալի այս վերջին միսիթարութեան և յուսոյ ծէսը: Եւ երբ հանգուցեալի դին Կ. Պօլս են տանում, ուր և պիտի յանձնէին հողին՝ հայ կաթոլիկ-

\* ) Այս տաճարի մտախն յետոյ:

ների և մերայնոց միջև մի անժիտ, եթէ չասենք յիմար, կրօնական վէճ է ծագում «ձեռաց», որ կարծեմ մասնաւոր «տուր ու դմիոցի» էլ է հասնում, ինչպէս որ ակնարկում են դէպրը պատմող նոյն ժամանակի հայ լրագիրները։ Կաթոլիկներն առարկում են, թէ քանի որ Պօղոս-բէյը կաթոլիկ քահանային խոստովանելով՝ նորա ձեռով էլ վերջին սրբութիւնն առաւ, ուստի և կաթոլիկ վախճանուելով՝ կաթոլիկական ծէսով էլ պիտի թաղուի Խոկ մերայինք էլ բոլորովին հակառակը պնդելով՝ բանն այնտեղ է հասնում, որ նոյն ժամանակների Թիւրքիոյ սատրազամն անդամ Ալի թէ, չը դիտեմ Ձուադ (մէկը միւսին միշտ փոխարինում էր՝ անուանի փաշան միջամտում է կ. Պօլսի հայոց կրօնա-մեռելաբանական այս նանրախորհուրդ վէճում և արևելցուն յատուկ խելացի սրամտութեամբ հետևեալ կերպով է «վնում հարցը»՝ ասելով—«Եւ Բ'նչ էք ուզում, այ կաթոլիկները. Պօղոս-բէյը ձեր քահանային խոստովանելով՝ ձեզ է աւանդել իւր հոգին, թողէք որ հայերն էլ նորա անշնչացած դին տանին։ Անմահ հոգին ձեզ, նեխեալ մարմինը սրանց»...

Այսուհետեւ՝ հօթանասնական թուականների սկզբին մնաք տեսնում ենք Փարիզում Տէր Յովհաննէս Հիւնքեարքէյէնդեան քահանային հայ հոգեոր հովուի պաշտօնով հաստատուած իւր բաղմաթիւ ընտանիքով, Արդէն ծերութեանը մօտեցած տէր հայը իւր մասնաւոր բնակարանի սենեակներից մէկը՝ դահլիճը յատկացնելով հայոց մատուին՝ տարիներ շարունակ պաշտօնավարում էր այստեղ իւր հօտի կրօնական-ծիսական արարողութիւնները կատարելով։ Տէր Յովհաննէս հայը թէւ ևրոպական կրթութիւն ստացած մարդ չէր, բայց որպէս հայոց հին գպրոցի հետեւող ուսումնասէր անձն՝ չէր խորշում երբեմն գրական և այլ տեսակ զրոյցների ու խօսակցութեան առիթ տալուց իւր ծխականներից ումանց, մանաւանդ ուսանողներին, որոնք նորա տանը և նորա միջնորդութեամբ կարողանում էին առիթ ունենալ տեսնուելու և ծանօթանալու իրարու հետ, և այս ըստ մէծի մասին ժամերգութիւններից յետոյ ի հարկէ։

Սակայն մի կողմից այս պատահական և մասնական տեսակցութիւնն ու խօսակցութիւնը, որ հարկաւ չէին կարող Փարիզի մեր դաղութի զանազան պահանջներին յարմար ծաւալն ու ձեւն ընդունել, իսկ միւս կողմից թէ մեր մի քանի ընկեր-ուսանողներիս բանաւոր կերպով յորդորումները, թէ լրագրութեան մէջ տպուող և արտատպուող (Կ. Պօլսի հայ լրագիրները արտատպում էին «Մշակից») վերոյիշեալ «Փարիզի նամակներիս» բողոքներն ու յանդիմանութիւնը և թէ վերջա-

պէս համամիտներիս ընդհանուր գործակցութեան շնորհիւ ասես հասաւ ժամանակը, երբ հարկ էր արդէն հայկական մի ընկերութիւն հիմնել Փարիզում: Այս ընկերութիւնը նախ ուսանողական և կամ ուսման ու գիտութեան հետ առնչութիւն ունեցող անձանց ընկերութիւն պիտի լինէր իհարկէ, որովհետեւ թէ նախաճեռնողները այս կարգից էին և թէ ուսանողներն էին և պէտք է լինին միշտ այն մաքուր աղը, որով համեմում է ժամանակի սովորութեան համաձայն հասարակութեան մի նոր զարդող մասի ստաւոր կամ ընկերային կեանքի կերակուրը:

Եւ ահա ոչ մի յաւակնութիւն չունենալով և չերևակայելով հիւանդաբար մեծ-մեծ գործեր կատարելու մասին՝ հաւաքուելով մեր անդրանիկ ընկեր ուսանողներից մէկի մօտ, որ այսօր հայ բժիշկների շարքին է պատկանում, նախապատրաստական ժողովներ ունեցանք 1875-ին իրականացնելու համար մեր քարոզած ու փայփայած գաղափարը Փարիզի հայ ուսանողական ընկերութիւն հաստատելու մասին: Ի՞նչ կարող էր լինել արդեօք այս ընկերութեան նպատակը: Ո՞վ էր դժուար ու մեծ բաներ երազում, քանի որ կազմուելի ընկերութեան անդամների ամենամեծ մասը դեռ իրարու հետ ոչ ծանօթ և ոչ միմեանց «ուեխն» էր տեսել՝ ճիշտ այսօրուայ փարիզաբնակ հայերի պէս: Միթէ բաւական չէր եթէ ընկերութեան նպատակը՝ չեմ ասում Եւրոպայի մէջ գոյութիւն ունեցող ընկերութիւններից փոխ առած նպատակներից լինէր, այլ դեռ սկզբում նմանուէր գոնէ թէկուզ Ս. Պետերբուրգի և Մոսկուայի հայ ուսւանողական ժողովներին նպատակին: Ինչ և է, կազմեցինք մի կանոնադրութեան ծրագիր, որ նոյն ժամանակի մայրաքաղաքիս մէջ կամ այլուր եղած ուրիշ ուսանողական ընկերութիւնների կանոնադրութեան, եթէ կարելի է ասել, տեղիս և հանգամանքներիս յարմար հայացումն էր, որին համակրեցին տաճկահպատակ հայ ուսանողներից մինչև անգամ թուրք տէրութեան հաշուով ուսումն առնող մի երկու պարոն: Ապա մեր առաջին բան ու գործն եղաւ նոյն ժամից իսկ շօշափելի դարձնել նախ ընկերութեանս գոյութիւնը՝ իւրաքանչիւրիս նուրիելի փոքրաթիւ գրքերով սորա ապագայ գրադարանի մի խմորումն առաջ բերելով, և յետոյ շարունակել աշխատել ընկերութեանս միւս գործերի համար: Այսպէս էլ եղաւ: Ամեն մէկը մեղանից ինչ գիրք էր կարող էր նուիրել, տալ նոր կազմուելի գրադարանին—տալիս էր՝ ինչ լեզուով էլ լինէր, Բայց որովհետեւ կազմուել սկսող ընկերութիւնս դեռ ևս ոչինչ

չհնէր, մւր մնաց թէ բնակարան, ուստի և նուիրուած գրեկըն առ ժամայն հաւաքում էինք վերոյիշեալ մեր անդրանիկ ընկեր—ուսանողի մօտ, որ յետոյ այն բոլոր հաւաքածուն պիտի յանձնէր ըստ պատկանելոյն, ինչպէս և յանձնեց էլ:

Այսպէս էր ահա սկզբն առնում եօթանամնական թուականներին Փարիզի հայ ուսանողական ընկերութեան ցանկալի գործը, որ գժրախտարար կատարեալ իրականութիւն չը դարձաւ, որովհետեւ գլխաւոր նախաձեռնող անձինք, օրինակ, հանգուցեալ Պօղոս Խղմայլեանը և այլք, 1876 վերջերին արդէն հայրենիք վերադարձան: Բայց յետոյ, ինչպէս երևեաւ, մեր ցանած սերմերը չէին ընկել ապառաժի վրայ, այլ փոքր ի շատէ փափուկ հող գտնելով շուտով սկսել էին աճել: Արդէն յայտնի է թէ ինչ տոկում եռանդով վերսկսեց այստեղ հայկական մի ընկերութիւն հաստատելու գործը պ. գօքտօր Ռափայելեանը՝ գործակից ունենալով գլխաւորապէս մեր Թիֆլիզի պ. Գրիգոր Փրիդոնեան ճարտարապետին, որ այն ժամանակ այստեղ էր բնակւում՝ գարմանել տալով իւր երկարատև տկարութիւնը: Եւ ահա սրանց գործունէութեան արդինքն այն եղաւ, որ իրաւ հայկական մի ընկերութիւն հիմնուեցաւ Փարիզում Société philomathique արտենուու անունով—այսինքն «Հայկական-ուսումնասիրաց ընկերութիւն»:

Թէ որպիսի երկունքից յետոյ և ինչ հանգամանքներու սկսել էր ծնունդ առնել այս ընկերութիւնը, և ապա թէ ինչպէս կազմակերպուելով՝ գոյութիւն էր ստացել և շարունակել—այս մասին նոյն ժամանակի հայ լրագիրների մէջ թէև կան տեղեկութիւններ, բայց ցանկալի է որ ընկերութեան նախաձեռնողներից և կամ գործիչ անդամներից մէկը պատմէր մեզ այս ամենը հանգամանօրէն՝ ցոյց տալով մայրաքաղաքիս նոյն օրերի մանաւանդ այն հայերի հոգեկան և այլ տրամադրութիւնը, որոնք կարողացել էին միանալ և հայկական մի ընկերութիւն կազմել գոնէ մի քանի տարով... իսկ ես առ այժմ այսքանը միայն կասեմ, որ 1883 ին երբ վերստին Փարիզ գտնուեցայ, տեսայ որ յիշեալ «Հայկական ուսումնասիրաց ընկերութիւնը» արդէն իւր օրհասականին էր հասել...

Ն. ՑԱՐՈՑ

1904 դեկտեմբեր.